ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"01" "06" 201 թ.

Թ/հ 18/45

**ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝**
**պարոն Արա Զոհրաբյանին**

**Հարգելի պարոն Զոհրաբյան,**

2018 թվականի մայիսի 29-ին ՀՀ փաստաբանների պալատում անց է կացվել կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության նպատակով ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից ձևավորվող մրցութային խորհրդի անդամի թեկնածու առաջադրելու համար հարցազրույց: Հաշվի առնելով, որ կայացած մրցույթի վերաբերյալ 2018 թվականի մայիսի 29-ին ՀՀ Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում տեղադրված հայտարարությունից[1] մի շարք հարցեր են առաջանում, խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել թեկնածուի առաջադրման գործընթացի վերաբերյալ, մասնավորապես.

1) Ի՞նչ հիմնավորում ունի փաստաբանների պալատի կողմից մրցույթին մասնակցելու հայտերի ընդունման վերջնաժամկետը մայիսի 24-ը սահմանելը այն դեպքում, երբ մրցույթի մասին հայտարարությունը հրապարակային տարածվել է դրանից ընդամենը 3 օր առաջ,
2) Ի՞նչ սկզբունքով են սահմանվել փաստաբանների պալատի կողմից անցկացվելիք մրցույթի թեկնածուին ներկայացվող՝ հայտարարության տեքստում նշված չափանիշները,
3) Ի՞նչ սկզբունքով է կազմակերպվել հարցազրույցը. ինչպիսի՞ բովանդակություն են ունեցել հարցերը, արդյո՞ք եղել է նախապես կազմված հարցաշար, և ի՞նչ չափորոշիչների հիման վրա են թեկնածուները գնահատվել,
4) Ո՞վքեր են եղել մրցույթին հաղթող թեկնածուից բացի մրցույթին մասնակցող մյուս 5 թեկնածուները: Խնդրում ենք տրամադրել մրցույթի արձանագրությունը՝ ներառյալ մրցույթի արդյունքները և կայացրած որոշման հիմքերը:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

**Հարգանքով՝**

**ԹԻՀԿ գործադիր տնօրեն** **Սոնա Այվազյան**

[1] http://advocates.am/news/view/2055.html

Հայաստան, Երևան, 0019, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689 • Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am